տարիմ քո լինելն, և առ այդ արժանաւորութեան տուաք իշխանութիւն քեզ Սրբակրօն Տեառն Սեղբեստրոս արք Եպիսկոպոսիդ աղձնու պաշտօն առաջին տանուտէրութեան տանն հայոց, ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Սեղբեստրոս արք Եպիսկոպոս աղձնուց նստցիս երկրորդ Աթոռ առաջի աստիճանի գահն մեծն և բարեվարք տանն հայոց և ունիս իշխանութիւն, զի տանուտերամբ հանդերձ տացես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք ամենայն պաշտօնատարաց, զի ելանեսցեն իւրաքանչ 'ի գործ ըստ Օրինօքն հայաստանեաց, և ունիս իշխանութիւն տանուտերամբ հանդերձ ըստ Օրինօք հրամայել 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ ընդ երեսս երկրին հայաստանեաց, և ունիս պատիւ ունելոյ քոյ երկուս ձայնս. գրուեցաւ 'ի դրանն գահն մեծ և բարեվարք տանն Հայոց, յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեաց, կնքեաց և յանձնեաց.
Միքայէլ իշխան, ○
Մանուէլ Գծագիր. ○

Իշխանութեամբն ամենայն Հայոց ձեռնադրեց նամակս առաջին պաշտօնի հայրախնամ,
Մաղաքիայ։ ○